ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՄՐՑՈՒՅԹ

12.05.2017 10:00

ՀՀ փաստաբանների պալատը եւ «Մանանա» մանկապատանեկան կրթամշակութային կենտրոնը Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան ընդառաջ հայտարարում են մրցույթ 7-ից 17 տարեկան երեխաների համար: Մրցույթը անցկավելու է երեք անվանակարգերում՝ լուսանկարներ, էսսեներ և ֆիլմերի սցենարներ:

Լուսանկարներ

Լուսանկարչական մրցույթի խորագիրն է «Հայաստանի երեխաները»: Յուրաքանչյուր մասնակից կարող է մրցույթին ներկայացնել 1-ից 5 լուսանկար, որոնք կպատկերեն տարբեր տարիքի երեխաների կյանքը թե լավ, թե վատ կողմերով: Լուսանկարների չափը պետք է լինի առնվազն 1 MB: Լուսանկարների հետ պետք է նաեւ ուղարկել կարճ նկարագրություն, նշելով, թե ով է պատկերված, որտեղ եւ երբ է արվել լուսանկարը:

Էսսեներ

Էսսեների մրցույթի թեման է «Իմ իրավունքները եւ ինչպես են դրանք պաշտպանվում»: Նախապատվությունը կտրվի այն էսսեներին, որոնք կներկայացնեն որեւէ մեկ իրավունք կոնկրետ, իրական օրինակով: Նյութերի ծավալը պետք է լինի առավելագույնը 500 բառ (մոտ մեկ համակարգչային էջ):

Ֆիլմի սցենարներ

Սցենարների մրցութի թեման է «Երեխաների իրավունքները»: Սցենարը պետք է նախատեսված լինի մեկ րոպեանոց ֆիլմի նկարահանման համար: Այն կարող է վերաբերվել թե որեւէ կոնկրետ իրավունքի, թե կարող է արտահայտել երեխայի իրավունքների եւ դրանց պաշտպանության կարեւորությունը ընդհանրական ձեւով: Սցենարը պետք է նկարագրի, թե ինչ ենք մենք տեսնելու եւ լսելու ֆիլմում: Սցենարի առավելագույն ծավալը պետք է լինի մեկ համակարգչային էջ:

***

Կարելի է մրցույթին մասնակցել ինչպես մեկ, այնպես էլ բոլոր անվանակարգերում:

Մրցույթի արդյունքները կամփոփվեն հունիսի 1-ին, եւ տարբեր անվանակարգում ժյուրիի կողմից լավագույն ճանաչվածները կպարգեւատրվեն

մրցանակներով, լավագույն էսսեներն ու լուսանկարները կհրապարակվեն, իսկ հաղթող ֆիլմի սցենարի հիման վրա կնկարահանվի ֆիլմ հեղինակի մասնակցությամբ։

Ինչպես ուղարկել

Մրցույթի նյութերը կարող եք ուղարկել 17am.reporter@gmail.com կամ press@advocates.am էլ. հասցեներին մինչեւ մայիսի 28-ը՝ թեմայի տողում նշելով՝ «Մրցույթ»։ Նամակում պետք է անպայման նշել հեղինակի անուն, ազգանուն, հայրանուն, տարիք, մարզ, բնակավայր, դպրոց, դասարան եւ հեռախոսահամար։

***

Հարցերի համար կարող եք զանգահարել՝ 094536002 ՀՀ փաստաբանների պալատի մամուլի խոսնակ Ծովինար Խաչատրյանին։

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })